



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

*Երևան, Կառավարական պտն 1*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

(Ա/Ձ Անահիտ Սահակյանի 02.05.2017թ.-ի վարչական բողոքը մերժելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«02» հունիսի 2017թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Վահե Ստեփանյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության 07.03.2017թ. թիվ 1110447 ստուգման ակտը և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 21/2 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ Ա/Ձ Անահիտ Սահակյանի 02.05.2017թ.-ի վարչական բողոքը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

Ա/Ձ Անահիտ Սահակյանը՝ ի դեմս լիազորված անձ Միեր Հակոբյանի (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ), բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության (այսուհետ նաև՝ Հարկային տեսչություն) 07.03.2017թ. թիվ 1110447 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ստուգման ակտ) և ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկ-

ման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 11.04.2017թ. թիվ 21/2 որոշումն (այսուհետ նաև՝ Որոշում) անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 02.05.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.01.2017թ. թիվ 1110447 հանձնարարագրի (այսուհետ նաև՝ Հանձնարարագիր) հիման վրա Ա/Ձ Անահիտ Սահակյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ նաև ՀԴՄ) կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 07.03.2017թ.-ին կազմվել է թիվ 1110447 ստուգման ակտը, որով Ա/Ձ Անահիտ Սահակյանին առաջադրվել է տուգանք՝ 300.000 ՀՀ դրամի չափով:

Ա/Ձ Անահիտ Սահակյանը 14.03.2017թ. դիմել է Գանգատարկման հանձնաժողովին՝ Ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով:

Գանգատարկման հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 21/2 որոշմամբ գանգատը մերժվել է, Ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Որպես բողոքի փաստական և իրավական հիմքեր Բողոք բերած անձը հայտնել է, որ՝

- Հանձնարարագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ձևով և ժամկետներում որևէ կերպ չի հանձնվել Անահիտ Սահակյանին:

- ստուգման գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումով: Մասնավորապես, Ստուգման ակտի բովանդակությունից երևում է, որ ենթադրյալ խախտման հիմքում դրվել է ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կառավարության որոշում) թիվ 1 հավելվածի 13-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջի խախտում, այն է՝ ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրված լինի կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում), որը նույն որոշման հավելված 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն դիտվում է որպես ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում: Վերոգրյալի կապակցությամբ Բողոք բերած անձը գտնում է, որ պարզ չէ, թե ինչ է խախտվել և ինչի համար է նշանակվել պատասխանատվություն, քանի որ սույն ակտի համար առանցքային համարվող արտահայտությունը՝ «... ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ով սահմանված «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների» 13-րդ կետի 11-րդ մասի պահանջի

*խախտում»*, հնարավորություն չի տալիս ըստ էության կարծիք կազմել վերագրվող խախտման մասին: Ուստի, ըստ Բողոք բերած անձի, Ստուգման ակտի 1-ին կետն ընթերցելիս վարչական ակտի նշված մասը, որով սահմանվել են հիմնական պարտականություններ անձի համար, չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ վարչական ակտը հստակ և հասկանալի ձևակերպված լինելու պահանջներին:

Միաժամանակ, Բողոք բերած անձի պնդմամբ, Ստուգման ակտի մեջբերված կետից պարզ չէ, թե ինչ գործընթացի իրականացման արդյունքում է պարզվել, որ պատշաճ վիճակի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, ինչ գործողություններ են իրականացվել, որով հիմնավորվել է, որ տրված ՀԴՄ կտրոնը չի եղել պատշաճ վիճակի, ինչ ապացույցներ են ձեռք բերվել, որով հիմնավորվել է, որ առկա է խախտում, որ իրավական նորմն է խախտվել անձի կողմից, ինչ սկզբունքով է իրականացվել վերջնական պարտավորության գումարի հաշվարկը:

- Կառավարության որոշմամբ հաստատված հավելված 1-ով սահմանված որևէ պահանջի խախտում չի կարող դիտվել որպես ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտում այն պարզ պատճառով, որ վերոհիշյալ հավելվածով սահմանվել են ՀԴՄ-ներին ներկայացվող տեխնիկական պահանջները, իսկ «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված պատասխանատվությունն ամենևին էլ դրա համար չէ: Ըստ բողոք բերած անձի, ՀԴՄ շահագործման կանոններ սահմանված չեն նաև նույն որոշման Հավելված 2-ով, որով սահմանվել է «ՀԴՄ-ի կիրառման կարգ»-ը, որի խախտումը նույնպես չի կարող առաջացնել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված պատասխանատվություն:

- «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները սահմանվում են սույն օրենքով», հետևաբար ՀՀ կառավարությանը նման կանոններ կամ կարգ սահմանելու իրավասություն տրված չէ: Ուստի, նշվածի և «Իրավական

ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից հետևում է, որ Կառավարության որոշման թիվ 2 հավելվածի 40-րդ կետում չէր կարող սահմանված լինել ՀԴՄ-ի շահագործման կանոն կամ ՀԴՄ-ի կիրառման կանոն, քանի որ դա հանդիսանում է բացառապես օրենքի կողմից կարգավորման ենթակա տիրույթ: Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը պնդում է, որ Ստուգման ակտով նկարագրված «խախտում»-ը չի կարող առաջացնել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված պատասխանատվություն և հիշատակված նորմը կիրառվել է սխալ:

- վարչական մարմինը չի իրականացրել գործի լիարժեք քննում, վեր չի հանել իրավական և փաստական բոլոր հանգամանքները և հանգել է սխալ հետևության: Գործում առկա ապացույցներով չի հաստատվում այն հանգամանքը, որ ստուգման իրականացման պահին խանութում գործել է զեղչ, զեղչը գործել է կող-1956 և կող-1789 ապրանքների նկատմամբ և որ նշված ապրանքները վաճառվել են համապատասխանաբար 3000 և 4900 դրամով, այլ ոչ թե ՀԴՄ մուտք արված և ՀԴՄ կտրոնի վրա արտացոլված գնով:

Ըստ Բողոք բերած անձի, իրականում տվյալ վաճառակետում որևէ զեղչ կամ զեղչային համակարգ չի գործել, իսկ ապրանքներն էլ վաճառվել են հենց այն գներով, որոնց հանրագումարն արտացոլված է ՀԴՄ կտրոնով: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ լիակատար կամ մասնակի զեղչային համակարգի անցնելիս տնտեսավարող սուբյեկտը համապատասխան հայտարարություն է ներկայացնում հարկային մարմին, ինչն այս դեպքում բացակայում է:

Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի կարգավորումների ուժով, վարչական վարույթի ժամանակ խախտման փաստը պետք է ապացուցվեր վարչական մարմնի կողմից, սակայն Ստուգման ակտում Ա/Ձ-ին վերագրված խախտումը կատարված լինելու վերաբերյալ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, ըստ էության, առկա չէ: Ուստի քննարկվող արարքն իրավական առումով տեղի չի ունեցել:

- Ա/Ձ Անահիտ Սահակյանի արարքում, որպես ցանկացած պատասխանատվության պարտադիր տարր, բացակայել է մեղքը, որի առկայությունը պարզելու համար անհրաժեշտ էր պարզել՝ արդյո՞ք վիճարկվող Ստուգման ակտի մեջ նկարագրված արարքը կատարելու պահի դրությամբ առկա են եղել համապատասխան տեխնիկական հնարավորություններ՝ արտացոլելու զեղչը ՀԴՄ կտրոնի վրա: Այս առումով Բողոք բերած անձը փաստում է, որ նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրումից հետո տևական ժամանակ ծրագրային խնդիրների պատճառով դրանց կիրառումը հնարավոր չէր իրականացնել Կառավարության թիվ 846-Ն որոշման պահանջներին համապատասխան, մասնավորապես, ստեղծված է եղել մի իրավիճակ, երբ զեղչ կիրառելու դեպքում հնարավոր չէր այնպիսի ՀԴՄ կտրոնի տրամադրումը, որում առանձնացված կլինեին կիրառված զեղչի չափը: Արդյունքում, տնտեսավարող սուբյեկտներն իրենց կողմից կիրառվող ծրագիրն իրենց իսկ ուժերով համապատասխանեցնում էին նոր սերնդի ՀԴՄ-ների տեխնիկական հնարավորություններին, իսկ ընթացքում տեղի ունեցած ծրագրային փոփոխությունների մասին ո՛չ տնտեսավարող սուբյեկտները, և ո՛չ էլ Ա/Ձ Անահիտ Սահակյանը չեն տեղեկացվել:

Վերոգրյալի արդյունքում Բողոք բերած անձը խնդրել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով անվավեր ճանաչել Ստուգման ակտը և Գանգատարկման հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 21/2 որոշումը:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի հունիսի 02-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Բողոք բերած անձի ներկայացուցիչ Մհեր Հակոբյանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքով ներկայացված պահանջը և դրա վերաբերյալ հիմնավորումները՝ ևս մեկ անգամ նշելով, որ Ա/Ձ Անահիտ

Սահակյանը ստուգման հանձնարարագիրը չի ստացել, իսկ հանձնարարագիրը ստորագրած անձի՝ Գայանե Ղարսլյանի լիազորված անձ լինելը որևէ կերպ ապացուցված չէ, բացի այդ, ստուգման ակտը ձևակերպված չէ պարզ և հստակ:

### **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.01.2017թ. թիվ 1110447 հանձնարարագրի հիման վրա 03.02.2017թ.-10.02.2017թթ. Ա/Ձ Անահիտ Սահակյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

- Հանձնարարագրին 03.02.2017թ. ծանոթանալու և այն ստանալու վերաբերյալ առկա է Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձ Գայանե Ղարսլյանի ստորագրությունը:

- Ստուգման արդյունքում 21.02.2017թ. կազմվել է թիվ 1110447 ստուգման ակտի նախագիծը, իսկ 07.03.2017թ.-ին՝ ստուգման ակտը, երկու փաստաթղթերի՝ տնտեսավարող սուբյեկտի ստորագրության համար նախատեսված տողում բացակայում է որևէ գրառում կամ ստորագրություն:

- Ստուգման ակտի 1-ին կետի համաձայն. «ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ հարկային տեսուչ Դերենիկ Ղազարյանի կողմից 03.02.2017թ.-ին ժամը 11:52 և 11:59-ին ք. Երևան, Սասնա Ծռեր 2 հասցեում գտնվող առևտրի կետից կատարվեց գնում՝ 7.900 դրամ արժողությամբ (աքսեսուար՝ կող-1956 3.000 դրամ և աքսեսուար՝ կող-1789 4.900 դրամ), որի դիմաց զեղչով վճարվել է կանխիկ 5.530 դրամ: Վաճառողը գումարը մուտքագրեց ՀԴՄ և համապատասխանաբար գումարի ՀԴՄ կտրոն տրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ով սահմանված «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական

պահանջների» 13-րդ կետի 11-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ ՀԴՄ կորոնի վրա պետք է տպագրված լինի կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում), որը նույն որոշման հավելված 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում:

Արդյունքում, տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ՝ «տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում վերը նշված խախտումը 1-ին անգամ կրկնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտին առաջադրվում է տուգանք՝ 300.000 դրամի չափով և նրա գործունեությունը այդ մասով կասեցվում է 5 օրով»:

- Համաձայն Ստուգման ակտի՝ ստուգմանը նախորդող մեկ տարվա ընթացքում՝ 16.09.2016թ. թիվ 2133814 ակտով արձանագրվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում:

- Ստուգումն իրականացնող հարկային տեսուչների կողմից 03.02.2017թ. կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ «..... Ա/Ձ Անահիտ Սահակյանին պարկանող ք. Երևան, Սասնա Ծռեր 2 հասցեում գործող հեծանիվների մանրամեծածախ առևտրի կետից կատարեցինք գնում 7.900 դրամ արժողությամբ (աքսեսուար կող-1756՝ 3.000 դրամ և աքսեսուար կող-1789՝ 4.900 դրամ), որի դիմաց վճարվել է կանխիկ դրամ և 30% զեղչով գինը կազմել է 5.530 դրամ (համապատասխանաբար 2.100 և 3.430 դրամ): Վճարման դիմաց տրամադրվել են ՀԴՄ կորոններ, որոնցում նշված է զեղչված գինը՝ ներառված ԱԱՀ-ն: Արձանագրությունը ընթերցվեց բարձրաձայն Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձ Գայանե Ղարսյանի ներկայությամբ»: Նշված արձանագրությունը ստորագրվել է նաև Գայանե Ղարսյանի կողմից:

- Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձ Գայանե Ղարսյանը 03.02.2017թ. ներկայացրել է հայտարարություն, համաձայն որի՝ «..... Ա/Ձ-ն գործունեություն է ծավալում ք. Երևան, Սասնա Ծռեր 2 և Մաշտոցի 13 հասցեներում և իրականացնում է հեծանիվների և հեծանիվների աքսեսուարների վաճառքի, ինչպես նաև վարձակալության գործունեություններ: Վաճառվող ապրանքներից որոշ մասի վրա գործում է զեղչ 30%-50% սույն թվականի հունվարի 10-ից: Չեն զեղչվում

միայն հեծանիվների որոշ մոդելներ: Հայտարարությունը գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ:»:

- Հարկային տեսչության պետի 23.02.2017թ. և 07.03.2017թ. գրությունների համաձայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ա/Ձ Անահիտ Սահակյանը հրաժարվել է Ստուգման ակտի նախագծին և Ստուգման ակտին ծանոթանալուց, ստորագրելուց և ստանալուց, Ստուգման ակտի նախագիծը և Ստուգման ակտն ուղարկվել են փոստի միջոցով: Համաձայն փոստային ծրարի հանձնման թիվ AG000458900AM և AG000837417AM ծանուցագրերի, գրություններով և Ստուգման ակտի նախագծով ու Ստուգման ակտով ծրարները հանձնվել են հասցեատիրոջը համապատասխանաբար 27.02.2017թ. և 10.03.2017թ.-ին:

- Ստուգման ակտի դեմ 14.03.2017թ.-ին գանգատ է ներկայացվել Գանգատարկման հանձնաժողովին, որի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի կողմից 11.04.2017թ. կայացվել է թիվ 21/2 որոշումը՝ գանգատը մերժելու վերաբերյալ: Որոշմամբ մասնավորապես նշվել է. ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են սույն օրենքը, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառմանը վերաբերող ՀՀ այլ օրենքները, օրենքով նախատեսված դեպքերում՝ ՀՀ կառավարության որոշումները, ինչպես նաև իրավական այլ ակտերը:

ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2013 թվականի N 846-Ն որոշմամբ հաստատվել են հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի (այսուհետ՝ Հավելված N 1), ինչպես նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի (այսուհետ՝ Հավելված N 2):

Հավելված N 2-ի 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պարտավորուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո, տրամադրել ՀԴՄ կտրոն:



Հավելված N 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրված լինի կիրառված գեղջի չափը (կիրառվելու դեպքում):

Իր հերթին, Հավելված N 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում Հավելված N 1-ով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անգն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարիությունը):

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության զրո ամբողջ յոթ տասնորդական տոկոսի չափով, բայց ոչ պակաս «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարի օբյեկտ չհամարվող հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ մեկ միլիոն դրամից, այլ գործունեության տեսակների մասով՝ երեք հարյուր հազար դրամից, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.01.2017թ. թիվ 1110447 հանձնարարագրի համաձայն իրականացվող ստուգման շրջանակում 03.02.2017թ. ժամը 11:52-ին և 11:59-ին ք. Երևան, Սասնա Ծռեր 2 հասցեում գտնվող առևտրի կետից կատարվել է 7900 դրամի գնում, մասնավորապես՝ գնվել է արքեսուար կող 1956՝ 3000 դրամի և արքեսուար կող 1789՝ 4900 դրամի, որի դիմաց 30% զեղչով

կանխիկ վճարվել է 5.530 դրամ: Սակայն վաճառված ապրանքների դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնների վրա կիրառված զեղչի չափը տպագրված չէ: Այսինքն, տվյալ դեպքում խախտվել են Հավելված N 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջները, ինչը Հավելված N 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Նշված խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը»:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքն անհիմն է և ենթակա է մերժման** հետևյալ հիմնավորմամբ.

Հանձնաժողովը գտնում է, որ սույն բողոքի քննության համար էական է Բողոք բերած անձի կողմից ներկայացված հետևյալ հարցադրումներին անդրադառնալը՝

1) տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառված տուգանքի համար հիմք ծառայած խախտումն արդյո՞ք սահմանված է օրենքով, թե Բողոք բերած անձի պնդման համաձայն, այն ամբողջությամբ կարգավորվում է ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ, որպիսի հանգամանքն ըստ Բողոք բերած անձի պնդման, անթույլատրելի է՝ հաշվի առնելով ինչպես «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումը, համաձայն որի՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները սահմանվում են սույն օրենքով, այնպես էլ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, որից հետևում է, որ կարգավորվող հարաբերությունը գտնվում է բացառապես օրենքի կարգավորման տիրույթում:

2) քննվող գործի շրջանակներում հիմնավորված է արդյոք անհատ ձեռնարկատիրոջ կողմից առևտրային զեղչեր կիրառված լինելու փաստական հանգամանքը,

3) առկա եղել են արդյոք իրական խոչընդոտներ՝ ՀԴՄ կտրոնի վրա Կառավարության որոշմամբ պահանջվող տեղեկատվության տպագրման համար,

4) պահպանվել են արդյոք հանձնարարագիրը տնտեսավարող սուբյեկտին հանձնելու վերաբերյալ օրենքով սահմանված պահանջները:

**Առաջին հարցադրման առնչությամբ** Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի փաստարկներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

**Օրենքի 2-րդ հոդվածի** համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են սույն օրենքը, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, **օրենքով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները**, ինչպես նաև իրավական այլ ակտեր:

**Օրենքի 5-րդ հոդվածի** համաձայն, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները սահմանվում են սույն օրենքով: **Հսկիչ-դրամարկղային մեքենաներին**, ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և **շահագործման կանոնները**, ինչպես նաև դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները **հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը**:

**ՀՀ կառավարության 01.08.2013թ.** «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի թիվ 1325-Ն ու 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» **թիվ 846-Ն որոշման հավելված 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն, ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝ ..... 11) կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում):**

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և

ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը: **Նույն հոդվածի 4.1-րդ մասի** համաձայն, **Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր** կամ տեխնիկական նորմեր (քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային, հաշվապահական հաշվառման, ստանդարտացման և այլն) **օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով**, որոնք չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:

Վերոհիշյալ իրավական կարգավորումներից հետևում է, որ ինչպես «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, այնպես էլ դրան համահունչ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքն անմիջականորեն սահմանել են ՀԴՄ-ների շահագործման կանոնների կանոնակարգման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ, ինչն էլ իր հերթին արտացոլվել է ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ: Հետևաբար, Բողոք բերած անձի դիրքորոշումն առ այն, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ՀՀ կառավարությանը նման կանոններ կամ կարգ սահմանելու իրավասություն տրված չէ, ամբողջությամբ անհիմն է:

Հանձնաժողովն անդրադառնալով Կառավարության որոշման Հավելված 1-ով և 2-ով սահմանված կանոնակարգումներին, գտնում է, որ դրանց անվանումները, այն է՝ համապատասխանաբար «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգ», որևէ կերպ չեն բացառում դրանցում ամրագրված նորմերը որպես ՀԴՄ-ների շահագործման կանոններ դիտարկելը՝ հիմք ընդունելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի

պահանջը, համաձայն որի՝ իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար: Նշվածի արդյունքում չի կարող հիմնավոր համարվել Բողոք բերած անձի դիրքորոշումն առ այն, որ Կառավարության որոշմամբ հաստատված հավելված 1-ով և հավելված 2-ով ՀԴՄ-ների շահագործման կանոններ սահմանված չեն:

Անդրադառնալով Բողոք բերած անձի այն դիրքորոշմանը, որ Ստուգման ակտում որպես խախտման հիմնավորում Կառավարության որոշման հավելված 1-ի 13-րդ կետի 11-րդ ենթակետի և հավելված 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի հիշատակումը չեն կարող համարվել որպես խախտման հիմնավորում, պարզ չէ թե ինչ է խախտվել և ինչի համար է նշանակվել պատասխանատվություն, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

**Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝ ..... բ) հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով: Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության գրո ամբողջ յոթ տասնորդական տոկոսի չափով, բայց ոչ պակաս «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարի օբյեկտ չհամարվող հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ մեկ միլիոն դրամից, այլ գործունեության տեսակների մասով՝ երեք հարյուր հազար դրամից, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով:**

Օրենքի վերոհիշյալ ձևակերպումից հստակ հետևում է իրավախախտման բնույթը և նկարագիրը, այն է՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը հսկիչ-

դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ, հետևաբար որևէ անորոշություն կամ խախտման բնույթի վերաբերյալ ոչ պատշաճ պատկերացում լինել չի կարող: Ինչ վերաբերում է Հավելված 2-ի 40-րդ կետի ձևակերպմանը, համաձայն որի՝ օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝ ..... , Հանձնաժողովը գտնում է, որ այն ոչ թե սահմանում է նոր խախտում, այլ հստակեցնում է շահագործման կանոնները, որոնց սահմանման իրավասությունը ՀՀ կառավարությանը վերապահված է անմիջականորեն Օրենքով: Հարկ է նկատել, որ Հավելված 2-ի 40-րդ կետի կանոնակարգումը հոգուտ տնտեսավարող սուբյեկտի է, քանի որ շահագործման կանոնների կոնկրետացման բացակայությունն ավելի լայն մեկնաբանության հնարավորություն կընձեռներ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության կիրառման համար:

**Երկրորդ հարցադրման առնչությամբ** Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի փաստարկումն առ այն, որ այն վաճառակետում, որտեղ իրականացվել է ստուգումը, որևէ զեղչ կամ զեղչային համակարգ չի գործել, իսկ ապրանքներն էլ վաճառվել են հենց այն գներով, որոնց հանրագումարն արտացոլված է ՀԴՄ կտրոնով, որը հավաստվում է նաև տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմնին զեղչերի կիրառման մասին ներկայացման ենթակա հայտարարության բացակայությամբ, ամբողջությամբ անհիմն է և հերքվում է գործում առկա հետևյալ ապացույցներով.

- Ստուգումն իրականացնող հարկային տեսուչների կողմից 03.02.2017թ. կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ «..... Ա/Ձ Անահիտ Սահակյանին պարկանող ք. Երևան, Սասնա Ծռեր 2 հասցեում գործող հեծանիվների մանրամեծածախ առևտրի կետից կարտեցինք գնում 7.900 դրամ արժողությամբ (աքսեսուար կող-1756՝ 3.000 դրամ և աքսեսուար կող-1789՝ 4.900 դրամ), որի դիմաց վճարվել է կանխիկ դրամ և 30% զեղչով գինը կազմել է 5.530 դրամ (համապարասխանաբար 2.100 և 3.430 դրամ): Վճարման դիմաց տրամադրվել են ՀԴՄ կտրոններ, որոնցում նշված է զեղչված գինը՝ ներառված ԱԱՀ-ն: Արձանագրությունը ընթերցվեց բարձրաձայն Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված

անձ Գայանե Ղարսյանի ներկայությամբ»: Նշված արձանագրությունը ստորագրվել է նաև Գայանե Ղարսյանի կողմից:

- Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձ Գայանե Ղարսյանը 03.02.2017թ. ներկայացրել է հայտարարություն, համաձայն որի՝ «..... Ա/Ձ-ն գործունեություն է ծավալում ք. Երևան, Սասնա Ծռեր 2 և Մաշտոցի 13 հասցեներում և իրականացնում է հեծանիվների և հեծանիվների արեստուարների վաճառքի, ինչպես նաև վարձակալության գործունեություններ: Վաճառվող ապրանքներից որոշ մասի վրա գործում է զեղչ 30%-50% սույն թվականի հունվարի 10-ից: Չեն զեղչվում միայն հեծանիվների որոշ մոդելներ: Հայտարարությունը գրված է իմ ձեռքով, որի համար ստորագրում եմ:»:

Անդրադառնալով այն փաստին, որ գործում բացակայում է հարկային մարմինն ներկայացման ենթակա առևտրային զեղչերի կիրառման վերաբերյալ հայտարարությունը, Հանձնաժողովը գտնում է, որ այն որևէ կերպ չի ազդում զեղչերի փաստացի կիրառման հնարավորության վրա և հայտարարության ներկայացումը տնտեսավարող սուբյեկտի իրավունքն է՝ պայմանավորված **«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով** սահմանված հարկման օբյեկտի մեծության հաշվարկումը զեղչերին համապատասխան իրականացնելու վերջինիս մտադրությամբ: Մասնավորապես, **նշված նորմի համաձայն**, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված հարկվող օբյեկտի հաշվարկման դրույթները չեն կիրառվում, եթե հրապարակային պայմանագրի համաձայն, ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձը հրապարակային պայմանագրով առևտրային զեղչերի կիրառման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ առևտրային զեղչեր կիրառելու վերաբերյալ:

**Երրորդ հարցադրման առնչությամբ** Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի փաստարկումն առ այն, որ նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրումից հետո տևական ժամանակ ծրագրային խնդիրների պատճառով դրանց կիրառումը հնարավոր չէր իրականացնել Կառավարության թիվ 846-Ն որոշման պահանջներին

համապատասխան, մասնավորապես, ստեղծված է եղել մի իրավիճակ, երբ զեղչ կիրառելու դեպքում հնարավոր չէր այնպիսի ՀԴՄ կտրոնի տրամադրումը, որում առանձնացված կլիներ կիրառված զեղչի չափը, որպիսի պարագայում բացակայում է նաև պատասխանատվության համար անհրաժեշտ մեղքի առկայությունը, **անհիմն է՝** հետևյալ հիմնավորմամբ.

**Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» կետի** համաձայն, կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնք կիրառում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, պարտավոր են՝ կիրառել այնպիսի հսկիչ-դրամարկղային մեքենաներ, որոնք բավարարում են սույն օրենքով և իրավական այլ ակտերով հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող կիրառման կանոններին:

Օրենքի նշված պահանջից անմիջականորեն հետևում է, որ ՀԴՄ-ների համապատասխանությունն օրենքով և իրավական այլ ակտերով հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող կիրառման կանոններին ստուգում է տնտեսավարող սուբյեկտը, ում կողմից նշված խնդրի առնչությամբ հարկային մարմինն դիմելու կամ համապատասխան խնդիրը բարձրաձայնելու վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ, հետևաբար նաև Բողոք բերած անձի կողմից չի ներկայացվել որևէ պատշաճ ապացույց՝ ստուգման ընթացքում կիրառված ՀԴՄ-ով **զեղչի չափը տպագրելու հնարավորության բացակայությունը:** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

**Չորրորդ հարցադրման առնչությամբ** Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի փաստարկումն առ այն, որ Հանձնարարագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ձևով և ժամկետներում որևէ կերպ չի հանձնվել Անահիտ Սահակյանին, անհիմն է՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3



աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, **բացառությամբ ... հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ... ճշտությանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների:**

ՀԴՄ-ների կիրառման ճշտությանն ուղղված ստուգումն ըստ էության հանդիսանում է ստուգման առանձնահատուկ տեսակ: Ստուգման նշված տեսակի դեպքում դրա արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից օպերատիվությունը, արագությունը և գաղտնիությունը հանդիսանում են ոչ միայն անհրաժեշտ, այլև պարտադիր պայմաններ: Մասնավորապես, ակնհայտ է, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից ՀԴՄ-ների կիրառման ճշտությանն ուղղված առաջիկա ստուգման, մասնավորապես՝ հսկիչ-դրամարկղային կտրոն տրամադրելու փաստը ստուգելու նպատակով կատարվելիք գնման վերաբերյալ նախօրոք տեղեկացված լինելու արդյունքում ստուգումն ըստ էության իր նպատակին չի ծառայի: Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդիրը սահմանել է բացառություն՝ ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգման դեպքում ազատելով հարկային մարմնին հանձնարարագիրը առնվազն 3 աշխատանքային օր առաջ ստուգվող ընկերությանը տրամադրելու պարտականությունից:

Օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանվում են համապատասխանաբար տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ **տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրա կողմից նշանակված (լիազորված) փոխարինող պաշտոնատար անձի բացակայությունը հիմք չի հանդիսանում հարկային մարմնի կողմից սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1.-ին մասի 5-րդ կետով նախատեսված ստուգումներ և սույն օրենքի N 4 հավելվածով նախատեսված ուսումնասիրություն չանցկացնելու համար:** Օրենքի 4-րդ հոդվածի 3.1.-ին մասի 5-րդ կետում նշված ստուգումների թվում է նաև **ՀԴՄ-ների կիրառման ճշտությանն ուղղված ստուգումը:**

Փաստորեն, օրենսդիրը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին վերապահելով իրավունքների որոշակի շրջանակ, ինչպես նաև նրա համար սահմանելով որոշակի պարտականություններ՝ այդպիսով համապատասխան

երաշխիքներ է ստեղծել ստուգումների բնականոն ընթացքի ապահովման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Օրենքի 10-րդ հոդվածը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի բացակայությունը չի դիտում որպես ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգման իրականացմանը խոչընդոտող պայման, դրանով ևս մեկ անգամ ընդգծելով ստուգման տվյալ տեսակի էության և կարգավորման առանձնահատկությունները:

Չնայած օրենքի վերոհիշյալ կարգավորումներին, համաձայն վարչական գործում առկա փաստաթղթերի, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.01.2017թ. թիվ 1110447 հանձնարարագիրը ներկայացվել է Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձ Գայանե Ղարսյանին, ով ստորագրությամբ հավաստել է, որ 03.02.2017թ. ստացել է հանձնարարագրի մեկ օրինակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ստուգումը փաստացի սկսվել է 03.02.2017թ.-ին:

Անդրադառնալով Բողոք բերած անձի ներկայացուցչի կողմից լսումների ընթացքում արված հայտարարությանն առ այն, որ վարչական գործի նյութերից չի հետևում, որ Գայանե Ղարսյանը հանդիսացել է Ա/Ձ Անահիտ Սահակյանի լիազորված անձը, միևնույն ժամանակ հաստատելով այն հանգամանքը, որ նշված անձը հանդիսանում է Բողոք բերած անձի աշխատակիցը, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, լիազորությունը կարող է ակնհայտորեն բխել նաև այն իրավիճակից, որում գործում է ներկայացուցիչը (մանրաձախ առևտրում՝ վաճառողը, գանձապահը և այլն):

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով նաև վարչական գործում առկա հարկային տեսչության պետի 23.02.2017թ. և 07.03.2017թ. գրությունները և դրանց համապատասխան փոստային անդորրագրերը, համաձայն որոնց, Բողոք բերած անձին ուղարկվել են ինչպես Ստուգման ակտի նախագիծը, այնպես էլ Ստուգման ակտը, Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի իրավունքներն ըստ էության պահպանվել են:

Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում են Ստուգման ակտը և Գանգատարկման հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 21/2 որոշումն անվավեր

ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը:

*Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, **1-ին մասի «բ» կետի պահանջներով՝***

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Ա/Ձ Անահիտ Սահակյանի 02.05.2017թ.-ի վարչական բողոքը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության 07.03.2017թ. թիվ 1110447 ստուգման ակտը և Գանգատարկման հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 21/2 որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ, մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ